# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## իրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/51**

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար շարժիչի յուղերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/51 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով իրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Ընթացակարգի հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված ձեռքբերվող գնման առարկաների տեխնիկական բնութագրերը թերի է շարադրված և անհրաժեշտ է բնութագրերը խմբագրել և ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Ընթացակարգի հրավերի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ներկայացված ձեռքբերվող գնման առարկաների տեխնիկական բնութագրերը խմբագրվել և ներկայացվել են նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

*Չափաբաժին 1.*

Շարժիչի յուղ 1 - Շարժիչի յուղեր նախատեսված դիզելային շարժիչների համար: Միջազգային ստանդարտներ՝ API CI4 և ACEA E4/E7 համապատասխան կամ համարժեք, ինչպես նաև նախատեսված Euro-II, Euro-III և EURO-IV արտանետումների պահանջներին համապատասխան: Օգտագործումը՝ նախատեսված տարվա բոլոր եղանակների համար: Մածուցիկության աստիճանը՝ 10W-40: Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ ցածր -30 C-ից: Արտադրության տարեթիվը՝ 2024 թ.-ից ոչ պակաս: Փաթեթավորումը՝ ոչ պակաս 200 լիտր տարաներով, կապարակնքված արտադրողի կողմից: Բռնկման ջերմաստիճանը՝ ոչ ցածր 206 C-ից: Կինեմատիկական մածուցիկությունը՝ 100 C-ում ոչ պակաս 13.5-ից, և 40 C-ում՝ ոչ պակաս 88-ից: Մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 150-ից: Խտությունը 15 C-ում՝ ոչ պակաս 855-ից: Ալկալային միացությունների քանակը / (mg KOH/g) (միլիգրամ կալիումի հիդրօքսի մեկ գրամ յուղի համար)/՝ ոչ պակաս 11.2 մգ KOH/գ-ից: Քիմիական բաղադրությունը՝ սինթետիկ: Երաշխիքային ժամկետը՝ ոչ պակաս 4 տարի: Արտադրող երկիր՝ Եվրոպական, Անգլիական: Ապրանքի հանձնման ժամանակ ներկայացնել սերտիֆիկատ՝ արտադրող երկրի և կազմակերպության, ինչպես նաև որակի վերաբերյալ: Ամբողջ խմբաքանակը մատակարարել նույն մակնիշի շարժիչի յուղից, և կազմակերպության կարիքից ելնելով ամբողջական քանակությամբ: Պատվիրատուի մոտ կասկած առաջանալու դեպքում, վաճառողն իր մատակարարած խմբաքանակի համար իր իսկ միջոցներով պետք է իրականացնի յուղի լաբորատոր փորձաքննություն՝ պատվիրատուի կողմից նշված ընկերությունում, որը կարող է լինել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ տարածքներից դուրս: Մատակարար ընկերությունը պետք է ներկայացնի ներմուծման և վերը նշված միջազգային ստանդարտներին համապատասխան փաստաթղթեր: Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

*Չափաբաժին 2.*

Շարժիչի յուղ 2 - Շարժիչի յուղեր նախատեսված դիզելային շարժիչների համար: Միջազգային ստանդարտներ՝ API CI4 և ACEA E7 համապատասխան կամ համարժեք, ինչպես նաև նախատեսված Euro-II, Euro-III, EURO-IV և EURO-V արտանետումների պահանջներին համապատասխան: Օգտագործումը՝ նախատեսված տարվա բոլոր եղանակների համար: Մածուցիկության աստիճանը՝ 15W-40: Բյուրեղացման ջերմաստիճանը՝ ոչ ցածր -30 C-ից: Արտադրության տարեթիվը՝ 2024 թ.-ից ոչ պակաս: Փաթեթավորումը՝ ոչ պակաս 200 լիտր տարաներով, կապարակնքված արտադրողի կողմից: Բռնկման ջերմաստիճանը՝ ոչ ցածր 201 C-ից: Կինեմատիկական մածուցիկությունը՝ 100 C-ում ոչ պակաս 14.14-ից, և 40 C-ում՝ ոչ պակաս 105.12-ից: Մածուցիկության ինդեքսը՝ ոչ պակաս 135-ից: Խտությունը 15,6 C-ում՝ ոչ պակաս 868-ից: Ալկալային միացությունների քանակը / (mg KOH/g) (միլիգրամ կալիումի հիդրօքսի մեկ գրամ յուղի համար)/՝ ոչ պակաս 11.2 մգ KOH/գ-ից: Քիմիական բաղադրությունը՝ հանքային: Երաշխիքային ժամկետը՝ ոչ պակաս 4 տարի: Արտադրող երկիր՝ Եվրոպական, Անգլիական: Ապրանքի հանձնման ժամանակ ներկայացնել սերտիֆիկատ՝ արտադրող երկրի և կազմակերպության, ինչպես նաև

որակի վերաբերյալ: Ամբողջ խմբաքանակը մատակարարել նույն մակնիշի շարժիչի յուղից, և կազմակերպության կարիքից ելնելով ամբողջական քանակությամբ: Պատվիրատուի մոտ կասկած առաջանալու դեպքում, վաճառողն իր մատակարարած խմբաքանակի համար իր իսկ միջոցներով պետք է իրականացնի յուղի լաբորատոր փորձաքննություն՝ պատվիրատուի կողմից նշված ընկերությունում, որը կարող է լինել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ՀՀ տարածքներից դուրս: Մատակարար ընկերությունը պետք է ներկայացնի ներմուծման և վերը նշված միջազգային ստանդարտներին համապատասխան փաստաթղթեր: Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 10)
Էլ. փոստ՝ m.simonyan@promotion.am
Պատվիրատու՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ